Տ. ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԱՆՅԱՆ
Միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

ԵԿԵՂԵՑԻՆ ՈՐՊԵՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ.
աստվածաբանական մտորումներ

Ա. Ծեսը եւ խորհրդաբանական կցանքը

Քրիստոնեական պաշտամունքն առաջնահերթություն է Եկեղեցու ամբողջական մտածողության մեջ: Այլ խոսքով՝ պաշտամունքը կամ ծեսը քրիստոնեական համայնքի կարեւորագույն բնութագիրներից է, որում նա բարձրագույն միություն է ձեռք բերում իր Հիմնադրի հետ այս աշխարհում իր առաքելությունն իրականացնելիս, ինչպես նաեւ այսպիսով ընդգծվում է իր նկարագիրը, նպատակը եւ վերջնական հանգրվանը: Ավելին՝ մեծագույն նշանը, որ զանազանում կամ տարանջատում է Եկեղեցին այլ հաստատություններից եւ հասարակությունից, այն է, որ Եկեղեցին ապրում է քավության խորհրդով՝ այն «երջանիկ փոփոխությամբ», որն ազատագրում է նրան եւ միջավայր ստեղծում բարոյականության հաջողության կամ հաղթանակի համար: Այսպիսի կյանքը, որն ունի Եկեղեցին, Սուրբ Հոգի Աստծու պարգեւն է, Որը Քրիստոսով բոլոր մկրտվածներին ընծայում է Հորը:

Վաղ եկեղեցական համայնքների կյանքի քննությամբ պարզ է դառնում, որ համայնքը մշտապես եղել է ժողովրդի հավաքի խորագույն արտահայտությունը, որի անդամները խնամում են մեկը մյուսին կյանքի անխուսափելի դժվարությունների միջով անցնելիս: Նրանք ընդունակ էին այսպես վարվելու, որովհետեւ ձեւավորվել էին յուրահատուկ պատմության միջոցով եւ շուրջ, որը մշտապես կրկնվում էր Հացի բաժանմամբ: Սա այլ նշանակություն չունի, քան այն, որ Աստված մեր գոյության ողբերգական նկարագիրը վերցնում է Իր վրա:

Հին Կտակարանի առանցքն Աստծու հարաբերությունն է Իր ժողովրդի, այսինքն՝ ամբողջ մարդկության հետ: Այն անկում ապրած մարդկու-

թյան շարժուն եւ եռանդուն պատրաստությունն է փրկության՝ Աստծու Որդու մարդացման միջոցով՝ այսպիսով հաշտեցնելով բաժանված մարդկությունն Աստծու հետ, իր մտերմիկ եւ նախնական հարաբերության մեջ դնելով։ Այս պատճառով Մարդացման խորհուրդը՝ որպես ուղղակի միջամտություն մարդկության կյանքում, ձեւավորում է համայնքի մասին նոր հասկացողությունը՝ որպես վերաստեղծված եւ քավված մարդկություն, որը վերաարարչագործության պտուղն է՝ որպես Աստծու շնորհի արդյունք։ Այն արտահայտում է Աստծու նոր կամքն ու նպատակը մարդկության վերաբերյալ, հետեւաբար սոսկ վերացական դրույթ չէ, այլ շատ գործնական, որովհետեւ իրականանում է համայնքում, որի միակ նպատակն է կյանքի այնպիսի ձեւ ստեղծել, որում հաղթանակը, զոհաբերությունը եւ արդարությունը իրականություն են։ Այսպիսի նոր կյանքի հիմնական եւ արմատական ըմբռնումն արտահայտված է Սուրբ Երրորդության, փոխակերպող եռաշերտ գործողությունների միջոցով.

ա) Հաղորդությունը՝ որպես մշտական հիշատակություն խաչված եւ հարություն առած Քրիստոսի, ինչպես նաեւ Աստծու եւ աշխարհի, վախճանի եւ պատմության միջեւ հարաբերության (Ա. Կորնթ. Ժ. 14–18)։

բ) Մկրտությունը՝ որպես կարեւորագույն հիմք՝ ներգրավվելու Սուրբ Հոգով տեղի ունեցած նոր ծնունդի մեջ, որպես նոր արարչագործություն՝ ամբողջությամբ պատկանելով նոր ինքնության, որպես կյանք՝ արժանի Աստծուն (Ա. Թեսաղ. Բ. 12)։

գ) Սուրբ Հոգու առաջնորդությունը դեպի մարդկային կյանքի նոր ձեւը (Հովհ. ԺԶ. 13–14), նոր քրիստոնեական էթնոսը, որն ունի աստվածանման կամ քրիստոսանման նկարագիր կամ, ավելի ճշգրիտ, աստվածակենտրոն կամ քրիստոսակենտրոն նկարագիր։ Վերոնշյալ եռաշերտ գործողությունների միջոցով ժողովուրդը փոխակերպվում է Եկեղեցու՝ ապրելով երեք հիմնական սահմանումներում.

ա) որպես Աստծու Ժողովուրդ (Հռոմ. Թ. 8),

բ) որպես Քրիստոսի Հարս (Եփես. Ե. 26–32),

գ) որպես Քրիստոսի Մարմին (Ա. Կորնթ. Գ. 21–23, ԺԲ. 12–31, Եփես. Ա. 21–23, Ա. Կողոս. Ա. 18)։

Այս երեք այլաբանությունները հիմնավոր կերպով արտահայտում են համայնքի նկարագիրն ու էությունը, որն ապրում, գործում եւ պաշտամունք է մատուցում երկնային իրականության մեջ, թեեւ Աստծու գոյությունը որեւէ կերպով չի նվազեցնում կամ վերացնում մարդու կամ մարդ-

կային տարրի առկայությունը Եկեղեցում։ Մյուս կողմից՝ անունը կամ նկարագիրն ինքնին պատասխանատվություն եւ որոշակի բարոյական չափանիշներ են ենթադրում՝ համապատասխան իրենց անվանը եւ ուղղվածությանը՝ որպես Աստծու պատկերի եւ համայնքի, որոնք կոչված են մարմնավորելու յուրահատուկ ինքնահասկացողություն եւ կենսակերպ։ Հետեւաբար Եկեղեցին ոչ թե սոսկ կառույց է, այլ գոյության կերպ։ Նույնիսկ իր կառուցվածքային սահմանումի մեջ Եկեղեցու խորհուրդը խորապես կապված է մարդու եւ աշխարհի գոյությանն ու Աստծուն։ Այսպիսով՝ քրիստոնեական հաղորդութենական կյանքը յուրահատուկ կոչում եւ առաքելություն է ստանում՝ միախառնված լինելով այն տեղի հետ, որտեղ Աստծու տիեզերական փրկությունն իրականություն է դառնում ժամանակի մեջ՝ մարմնավորելով Եկեղեցին՝ որպես կյանքի կաղապարն աշխարհում (Մատթ. ԺԶ. 18)։ Հետեւաբար այս համայնքը կարիքն ունի եկեղեցաբանության, որը պետք է ո՛չ նույնական լինի շրջապատող աշխարհի հետ եւ ո՛չ էլ մեկուսացած նրանից։ Այսինքն՝ Եկեղեցին, որ առանձնահատուկ համայնք է աշխարհի մեջ եւ աշխարհի համար, հաճախ նաեւ դեմ է աշխարհին։ Այսպիսով՝ Եկեղեցին՝ որպես սիրո համայնք, ապրելով եւ գործելով աշխարհի հետ եւ համար, բաղկացած է անձերից՝ որպես արտացոլանքը Սուրբ Երրորդության՝ «Բազումք ի մի էութիւն»՝ որպես տարածության մեջ գտնվող անձանց օրգանական միություն։

Սուրբ Հովհաննես ավետարանիչը Եկեղեցու կարգավիճակը բացատրում է որպես երկնային արտահայտությունը եւ սահմանափակ ներկայացումը երրորդութենական միության եւ մեկության, որպես հավիտենական համայնք՝ հիմնված սիրո եւ ազատության վրա (Հովհ. ԺԶ. 21–23)։ Այսպիսով՝ Եկեղեցու մասնակցությունը Հոր եւ Որդու կյանքին եւ փառքին՝ Սուրբ Հոգու հեղինակության միջոցով նոր տեսակի բարոյական փորձառություն է ստեղծում աշխարհի համար, հետեւաբար Եկեղեցին այն կարգն է, որ սրբագործված լինելով Աստծու Խոսքի եւ Հոգու ներկայությամբ՝ Քրիստոսի միջոցով հռչակում է մարդկության հաշտությունն Աստծու հետ։ Այդ իրողությանը մարդկությունը պատասխանում է ապաշխարությամբ, եւ Հաղորդությունն իրականություն է դառնում այս երկխոսության միջոցով, որը միակ հնարավոր եւ իրական Հաղորդությունն է։ Թեեւ Սուրբ Երրորդությունն ինքնին հարաբերություն է աստվածության երեք անձերի միջեւ, Նրանցից յուրաքանչյուրն ունի Իր յուրահատուկ հատկանիշը. այնտեղ չկան շփոթ, տարանջատում կամ գերակա-

յություն, այլ՝ կատարյալ միություն կամքի, զորության եւ իշխանության՝ որպես մեկը եւ բազումք միաժամանակ՝ միացած ներշաղկապված հարաբերությամբ։ Նույն կերպով համայնքը բաղկացած է տարբեր անձանցից՝ իրենց նկարագրով, ինքնությամբ եւ էությամբ, բայց միասին են սիրով, հավատքով, պաշտամունքով եւ միմյանց ծառայությամբ։ Աստված, Ինքնին հաղորդություն լինելով, չի ձգտում անհատ մարդու պատմությանը, այլ համայնքի, սակայն Աստված չի ցանկանում այնպիսի համայնք, որը կլանում է անհատին։ Աստծու առջեւ համայնքը եւ անձը ներկա են միեւնույն ժամանակ եւ լրացնում են միմյանց։ Այսպիսով՝ Եկեղեցու նկարագիրը՝ որպես Աստծու եւ մարդու համագործակցության իրականություն, հիմնված է Քրիստոսով Աստծու հայտնության վրա։ Հետեւաբար, Եկեղեցու եզակի եւ յուրահատուկ բարոյագիտական ընկալումը բխում է այնպիսի համայնքից, որտեղ հռչակվում է Ավետարանի խոսքը, եւ տոնախմբվում են խորհուրդները։ Այս համայնքի հիմքը Քրիստոսի ազատ, սիրող եւ զոհաբերվող գործողությունն է, այսինքն՝ ուրիշների համար իրականացրած հաղթանակած գործը՝ լինելով միմյանց հետ եւ միմյանց համար, որ նշանակում է լինել Քրիստոս միմյանց համար՝ ինքնահրաժարումով, մերձավորի հանդեպ գործնական կերպով, բարեխոսական աղոթքով եւ, վերջապես, Աստծու անունով միմյանց մեղքերը ներելով։ Այսպիսով՝ Եկեղեցին ձեռք է բերում ոչ թե կայուն, այլ շարժուն եւ փոխակերպվող բնույթ, որի շնորհիվ մասնակիցներն ապրում են սիրո, հավատքի, հույսի կյանքով, ազատության եւ ուրախության մեջ՝ զգալով Աստծու ներկայությունը եւ փոխանցելով այն աշխարհին։ Այն իրականացվում է Եկեղեցու պաշտամունքային եւ աշակերտության նկարագրով՝ ոչ միայն սոսկ մեղքերի թողության համար, այլեւ կյանքի վերանորոգության եւ Երկնքի Արքայության մեջ հավիտենական փրկության համար՝ մշտապես հաղորդության մեջ գտնվելով Սուրբ Երրորդության հետ՝ թե՛ աշխարհում Նրա գործունեության եւ թե՛ Նրա գոյաբանական էության հետ (տե՛ս Գաղ. Ե. 6)։ Ճիշտ այս իմաստով էլ Աստծու Որդու մարդացումը ոչ միայն փրկում է մեղքից, այլ փրկում է կյանքի համար, որպեսզի համայնքն ինքը կարողանա իրացնել Քրիստոսի ճշմարտությունը հավատքի, հույսի եւ սիրո միջոցով՝ որպես հավիտենական կյանքի նախաճաշակը, որը ձգտում է վերափոխել աշխարհն իր հաղորդութենական բնույթով, որը Եկեղեցին ապրում է իր փորձառությամբ։ Հետեւաբար Եկեղեցու՝ քրիստոնեական համայնքի, հիմնական նկարագիրը Երկնքի Արքայությունն

այս աշխարհում իրականություն դարձնելն է, որը կրավորականություն չէ կամ մերժում եւ փախուստ աշխարհից, այլ նրա վերափոխումը, ոչ թե տեղի փոփոխությունը, այլ գոյություն ունեցող վարքագծի վերափոխումը։ Ըստ այսմ, Եկեղեցին Եկեղեցի լինելու համար կարիք չունի աշխարհին դեմ լինելու, այլ ձգտելու ցույց տալ, որ աշխարհը կոչված է Աստծու բարի ստեղծագործությունը լինելու։ Իր մարդեղությամբ եւ խաչի վրա հնազանդությամբ եւ հարությամբ Աստված փաստորեն քավում է աշխարհի մեղքը, նույնիսկ եթե աշխարհը մերժում է ընդունել այդ քավությունը։ Այսինքն՝ թեպետ եւ աշխարհը մերժի Աստծուն, Եկեղեցին երբեք չի կարող աշխարհը թողնել հուսահատության մեջ, այլ կոչված է լինելու այն համայնքը կամ ժողովուրդը, որը ջերմեռանդորեն խնամում է իրեն եւ աշխարհը։ Այս իմաստով է Եկեղեցու խորհրդական կյանքը դառնում որպես Երկնքի Արքայության քաղաքականությունը՝ խորհուրդների իրականացմամբ, Ավետարանի տիեզերական քարոզությամբ եւ առաքինի կյանքի ու վարքի իրագործմամբ։ Այսպիսով՝ վերապրելով Հիսուսի պատմությունը եւ այս կերպով կազմելով համայնքը որպես Իր պատկերը, նշանակում է, թե Եկեղեցին չի կարող Եկեղեցի լինել առանց այս բոլորի, որովհետեւ Հիսուսի պատմությունը սոսկ պատմություն չէ եւ պատմելու համար չէ, այլ ապրելու եւ վերապրելու։ Այսպիսի ժողովուրդ-համայնքն է, որ կիսում է Քրիստոսի մահը եւ հարությունը եւ ներգրավված է Նրա կյանքում՝ Սուրբ Հոգով դառնալով Նրա Մարմինը, մկրտությամբ մասնակցելով այդ իրադարձությանը, ձեւավորվելով որպես համայնք։

Բ. Մկրտության խորհուրդը

Իր սկզբնական իմաստով մկրտությունը նշանակում է կուռքերից դառնալ Աստծուն (Ա. Թեսաղ. Ա. 9–12), մեղքերի թողություն գտնել եւ Սուրբ Հոգու շնորհներն ընդունել (Գործք Բ. 38) եւ Աստծուն արժանի կյանք ունենալ (Ա. Թեսաղ. Բ. 12)։

Սա այն պահն է, որտեղից սկսվում է կյանքի անդրադարձը, որովհետեւ այս իրադարձությամբ մարդն սկսում է իր հոգեւոր ճանապարհորդությունը եւ աշակերտության մեջ է մտնում՝ կոչվելով ապրելու որպես նոր ժողովուրդ՝ յուրահատուկ նկարագրով եւ էությամբ։ Քրիստոսի հայտարարությունը՝ գնացեք, ուսուցանեք, մկրտեցեք. *«Գնացե՛ք ուրեմն, աշա-*

կերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով։ Ուսուցանե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի» (Մատթ. ԻՀ. 19) հիմնադրում է մկրտության խորհուրդը, որը նշանակում է՝

ա) Նույնացում եւ պատկանելություն հատուկ անունի, որը նշանակում է ներկայություն եւ գոյություն, այսինքն՝ լինելություն,

բ) Քրիստոսով ծնվելով՝ հնարավորություն է տալիս ընդունելու Սուրբ Հոգին, Որն առաջնորդում է դեպի Հոր ընտանիքը՝ կրկնօրինակելով Սուրբ Երրորդության գոյության կերպը, որը կազմավորվում է՝ պարզ գոյությունից անցնելով արմատական փոփոխության միջով, այսինքն՝ անհատականությունից փոխվելով անձնավորության։

Մկրտությունն անձին հաստատում է համայնքի մեջ՝ հարաբերության նոր շերտերով, որը ձեւավորվում է Քրիստոսի մահվան եւ հարության շուրջ (Հռոմ. Զ. 4), ապաշխարությամբ եւ հավատքով (Հռոմ. Ա. 1–6), վերստին ծննդյամբ (Հովհ. Գ. 3)՝ որպես նոր սկզբնակետ եւ հիմնադրություն քրիստոնեական կյանքի փիլիսոփայության, որպես մշտական ուղղություն։

Այսպիսով՝ քրիստոնեական բարոյագիտությունից եւ վարքականոնից (էթիկայից) բխած փորձառությունն արտահայտվում է մկրտության խորհրդով, որն ազատագրության վարդապետությունն է (Հռոմ. Զ. 17) եւ արտահայտված է Եկեղեցու ծիսական ու խորհրդական բոլոր կարգերում։

Գ. ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Մինչ մկրտությունը նախասահմանում է Սուրբ Հոգով նոր ծնունդը, հաղորդությունը Եկեղեցու լինելության հաստատագրումն է՝ Եկեղեցուն կոչելով կյանքի։ Հաղորդությունը հաստատում է Եկեղեցու էությունը, իսկ Քրիստոս եւ պատմությունը Եկեղեցուն նկարագիր են տալիս՝ որպես Սուրբ Հոգով հաստատված հաղորդութենական համայնք՝ ընդգծելով Եկեղեցու ճշմարիտ էությունը։ Հաղորդությամբ ոչ միայն հաստատվում են Եկեղեցու կյանքն ու մարդկանց հաղորդութենականությունը, այլ ուղղորդվում են այն շարժումն ու ձգտումը, որոնցում այս համայնքը ներկա է աշխարհում՝ «գոհություն հայտնելով բոլոր պարագաներում» (Ա. Թե-

սաղ. Ե. 18)՝ դառնալով մի կողմից՝ Աստծու կյանքը՝ որպես Նրա սերն ու դատաստանն աշխարհի մեջ, աշխարհի հետ եւ աշխարհի համար, իսկ մյուս կողմից՝ իրականացնելով Սուրբ Հոգու գործը՝ մարդկային կյանքն ընծայելով Հորը։

Թէ՛ համատես Ավետարանները եւ թէ՛ Սբ. Հովհաննես ավետարանչի պատմածները Վերջին ընթրիքի մասին նկարագրում են հաղորդության խորհրդի պատմական եւ վախճանաբանական շերտերը՝ որպես Եկեղեցու եռամասնյա նկարագիր.

ա) Հիշատակություն — վերապրում, վերստացում, աշակերտություն։

բ) Աշխարհի այլակերպում — սիրո նորովի ընկալում, ապաշխարություն, ճշմարտություն, արդարություն, ազատություն՝ ընթանալով դեպի կատարելություն՝ աստվածայնացում։

գ) Լրումն կամ ամբողջացում Երկնքի Արքայության մեջ — ընթացք դեպի գալիք դարաշրջանը, մասնակցություն աստվածային կյանքին, հաշտություն Աստծու հետ Սուրբ Հոգու միջոցով (Մատթ. ԻԶ. 26—30, Մարկ. ԺԴ. 22—26, Ղուկ. ԻԲ. 14—38, Հովհ. ԺԵ. 17)։

Մասնավորապես, երրորդ սահմանումը հիմքն է քրիստոնեական բարոյագիտության կամ փորձառության, այլ խոսքով՝ անցավոր աշխարհում ապրելով հանդերձ՝ այն ապրում է ըստ համայնքի վախճանաբանական նկարագրի՝ կրելով եւ իրականացնելով գալիքի եւ նոր դարաշրջանի խոստումը՝ լինելով «ժողովուրդ» ընթացքի մեջ։ Հետեւաբար խորհրդաբանական իրականությունն ուղենշում է Եկեղեցու բարոյագիտական չափանիշը քրիստոնեական համայնքի մասնավոր վարքագիծը ձեւավորելու գործում։ Փաստը. «սուրբ, աստվածահաճո.... բանական պաշտամունքը» (Հռոմ. ԺԲ. 1) հիմքն է այն մտածողության, թե «ինչպես պետք է վարվել Աստծու տան մեջ, որ կենդանի Աստծու եկեղեցին է՝ սյուն եւ հաստատություն ճշմարտության» (Ա. Տիմ. Գ. 15)։

Պաշտամունքից է ծնվում եւ ստեղծվում քրիստոնեական փորձառությունը եւ «հավատքին իբրեւ պատարագ եւ զոհ ընծայվելու» բարոյագիտությունը (Փիլիպ. Բ. 17)՝ որպես մշտական իրականացումը «գալիք բարիքների ստվերի» (Եբր. Ժ. 1), որը «ուղիղ արահետներ» (Եբր. ԺԲ.13) է ծնում դեպի «Տիրոջ օրվա մոտենալը» (Եբր. Ժ. 25)։

Պաշտամունքի մեջ է ամբողջանում Քրիստոսի աներկբա սիրո ըմբռնումը դեպի Աստված եւ դեպի մարդը (Մատթ. ԻԲ. 37—40)՝ Աստծուն ծառայելով Սուրբ Հոգու շնորհով ձեւավորված համայնքում։

Ըստ Սուրբ Պողոսի ընկալման՝ երկու էական սկզբունք գոյություն ունի Եկեղեցում՝ «Աստծու տան մեջ վարվելու» համար.

ա) ապրել եւ գործել միմյանց համար (Հռոմ. ԺԲ. 3–5, Ա. Կորնթ. ԺԲ. 3),

բ) հնազանդվել միմյանց Քրիստոսի երկյուղով (Եփես. Ե. 21, Փիլիպ. Բ. 3)։

Այսինքն՝ Եկեղեցին արտացոլում է Աստծու կյանքն ու էությունը եւ այդպիսին է դառնում, քանի որ պաշտամունքով մուտք է գործում Սուրբ Երրորդության կյանքի մեջ։ Սակայն այն նաեւ պատասխանատվություն ունի արարչագործության հանդեպ որպես ամբողջություն, հետեւաբար պաշտամունք է մատուցում ամբողջ արարչագործության փոխարեն եւս։ Մի խոսքով՝ Եկեղեցին աշխարհի հետ հարաբերության իմաստով այլ բան չունի անելու, քան պաշտամունք մատուցելը, ոչ թե պաշտամունք բառի սոսկ ընկալյալ սովորությամբ եւ իմաստով, այլ որպես էութենական ճանապարհ աշխարհի համար։ Համապատասխանաբար, պաշտամունքը չի փոփոխում Աստծուն, բայց փոփոխության է ենթարկում համայնքին, որտեղ այն մատուցվում է՝ վերականգնելով Քրիստոսին հետեւելու՝ աշակերտության կերպը եւ հռչակելով փրկության հույսի մասին Իր տված խոստումը։

Դ. ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՉՈՒՄՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Եկեղեցին որպես մեկ միասնական Մարմին՝ իր ամբողջությամբ՝ որպես համայնք եւ անձինք, հետեւում է Քրիստոսին՝ որպես համայնք եւ անձ՝ իր մասնակցությունն ունենալով Քրիստոսի կյանքում՝ հետեւյալ սկզբունքով. «Ինչ պատահել է Քրիստոսին, պատահում է նաեւ քրիստոնյաներին»՝ որպես Հիսուս Քրիստոսի կյանքի բաժնեկիցների՝ փրկության համար։ Հետեւաբար աշակերտ լինելը նշանակում է մաս կազմել այնպիսի մի համայնքի եւ քաղաքականության, որը ձեւավորված է խաչի վրա Հիսուսի հնազանդ մահվան խորհրդի շուրջ։ Քրիստոնեական բարոյագիտության գործնականությունը ներկայացնելիս այն կարելի է ներկայացնել որպես «խաչի աստվածաբանություն», որը լույս է սփռում փրկության ամբողջ խորհրդի վրա, հետեւաբար քրիստոնեական կյանքը ոչ թե գաղափարների մի խումբ է կամ շարք այն մասին, թե ինչպես կա-

բելի է ապրել, այլ թե ինչպես պետք է ապրել, եթե ցանկանում ենք հավատարիմ լինել Հիսուսին։ Սա շարունակական հանձնառություն է այն առաքինություններին, որոնք ըստ էության.

ա) ձեւավորում են սրբերի համայնքը (Ա. Կորնթ. Զ. 11, Ա. Թեսաղ. Դ. 3–8, Ա. Պետ. Ա. 14–16),

բ) հետեւում են Աստծու օրինակին՝ սիրելու թե՛ մերձավորներին, թե՛ թշնամիներին (Մատթ. Ե. 43, Հովհ. ԺԳ. 15, ԺԵ. 12–13։ Ա. Հովհ. Դ. 7–11),

գ) ունեն հավատքի ազատությունը, սիրով պայմանավորված ծառայության եւ ինքնազոհության հանձնառությունը (Ղուկ. ԻԲ. 27–28, Գաղ. Բ. 20, Ե. 13, Զ. 24),

դ) համբերություն տառապանքների մեջ (Բ. Թեսաղ. Գ. 5, Ա. Պետ. Բ. 21–25),

ե) հնազանդություն եւ խոնարհություն ունեն, ինչպես Քրիստոս հայտնեց խաչի վրա (Փիլիպ. Բ. 18, Եբր. ԺԲ. 1–3),

զ) հույս ունեն Աստծու արդարության եւ գալիք աշխարհի, որն Աստված սկզբից էր ստեղծել եւ այժմ վերաարարում է Քրիստոսի միջոցով (Մատթ. Ե. 12, Հռոմ. Գ. 21–28, Ե. 1)։

Այսպիսով՝ Եկեղեցու՝ աստվածակենտրոն մարդկության համայնքի կոչումը ձեւավորում են նրանք, ովքեր սովորում են ապրել արարչագործության մեջ՝ այն համարելով պարգեւ եւ ընկալելով որպես մի տարածություն, որը նվաճվել է Հիսուսի հաղթանակով՝ աշխարհի փրկության համար։ Այսինքն՝ այն պատկանում է Աստծուն եւ ոչ թե մեզ, կամ հակառակը՝ այն պատկանում է մեզ միայն այն պատճառով, որ դա Աստծունն է, այսինքն՝ Նա՝ մարդեղության, խաչի եւ հարության խորհրդով ստեղծում եւ պարգեւում է այն տարածությունն ու միջավայրը, որտեղ մարդկային կյանքն ապրում է, աճում եւ հասունանում։

Այսպիսով՝ Եկեղեցու էական եւ սկզբունքային հատկանիշները, որոնցից բխում են նրա բարոյագիտական ընկալումներն ու չափանիշները, որոնցով նաեւ իրականացնում է իր հասարակական վարդապետությունը, հիմնվում են երեք շերտի վրա.

ա) Երրորդութենական վարդապետությունը,

բ) Խորհրդաբանական եւ պաշտամունքային նկարագիրը,

գ) Աշակերտությունը (Քրիստոսին)։

Ժամանակակից աշխարհիկացող հասարակության մեջ, երբ ընդհանուր շարժում կա նվազեցնելու Եկեղեցու դերը, առաջին հերթին տկարա-

ցել է Եկեղեցու պաշտամունքային նկարագիրը։ Հետեւաբար կարիք կա վերաձեւակերպելու Եկեղեցու կոչումն ու առաքելությունը, եւ ճիշտ այդ պատճառով քրիստոնեական համայնքի հիմնական մարտահրավերն այս աշխարհում Երկնքի Արքայության ընկալումն իրականություն դարձնելն է՝ արդյունավորապես կիրառելով իր բարոյագիտական վարդապետությունը՝ հիմնված իր այլակերպող խորհրդաբանական կյանքի եւ սուրբգրային պատգամի վրա։ Վերջին հաշվով, Եկեղեցու պատմությունը կամ կենսագրությունը Երկնքի Արքայության՝ գալիք դարաշրջանի համար մարդկության պատրաստության պատմությունն է։ Այսինքն՝ Եկեղեցին ներկայանում է որպես մի համայնք, որը ձգտում է «նոր դարաշրջանին», սակայն ապրում եւ գործում է «հին դարաշրջանում»՝ հիմնված Հիսուսի պատմության վրա այն տեսիլքով, որ այն սովորեցնում է մեզ միմյանց հետ ապրել որպես Աստծու ժողովուրդ։

РЕЗЮМЕ

Предметом для своих размышлений автор статьи сделал реальность Церкви как нравственной общности. В этом вопросе он особенно акцентирует свое внимание на обрядовой жизни Церкви, особенно на таинствах Святого Крещения и Святого Причащения, стараясь также сделать очевидной нравственную роль Церкви в современном мире.

SUMMARY

The author of the article reflects on the reality of the Church as a moral community. In this matter, he focuses especially on the ritual life of the Church, especially on the sacraments of Holy Baptism and Holy Communion, and also tries to make the moral role of the Church in the modern world evident.